ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 37

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի և ղեկավարվելով Զովաբեր համայնքի ավագանու կանոնակարգի 2-րդ ենթակետի 2-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 8 հերթական նիստի օրակարգը՝ հետևյալ հարցերով.

   1) ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնքում տեղական տուրքերի եվ վճարների 2018թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
   2) 2018թ. համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբեր գյուղական համայնքի ղեկավարի աշխատավարձի չափ սահմանելու մասին:
   3) ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբերի համայնքապետարանի աշխատակազմի և «Զովաբերի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանում 2018թվականի համար:
   4) ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնքի տարեկան բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու մասին:
   5) ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնքի համայնքային սեփականության 2017թ. տարեկան գույքագրման արդյունքների հաստատում:
   6) ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու մասին:
   7) ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնքի հողի հարկի, գույքահարկի և հողի վարձավճարների գծով ապառքների մարման գրաֆիկի կազմում:
   8) ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնքի 2018թ. տարեկան բյուջեի նախագծի հաստատում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ

6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 38-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածների պահանջները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել Զովաբեր համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2018թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի (հավելված N1):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ
2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

**Համայնքի ղեկավար՝** **ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 39

## 2018ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանել ՀՀ ազգային ժողովի պատգամավորի աշխատավարձի նկատմամբ 50%-ի չափով՝ 330500 /երեք հարյուր երեսուն հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ
2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

**Համայնքի ղեկավար՝ ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 40

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ԶՈՎԱԲԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 2) ենթակետով, 32-րդ հոդվածի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Զովաբերի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հաստատել «Զովաբերի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն թիվ 2 հավելվածի:
3. «Զովաբերի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի պարապուրդի ընթացքում տնօրենին և հաշվապահին վճարել աշխատավարձի 2/3-ը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ
2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

**Համայնքի ղեկավար՝** ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 41

## ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5)-րդ ենթակետով, և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Զովաբեր համայնքի 2017թ. տարեկան բյուջեի վարչական մասի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Վարչական բյուջեի Պահուստային ֆոնդ Բաժին 11, խումբ 1, դաս 1, հոդված 4891 «Պահուստային ֆոնդ» պակասեցնել 150.0 հազ. դրամ հաստատելով 108.0 հազ. դրամ:
2) Վարչական բյուջեի Ապարատի պահպանման ծախսեր Բաժին 01, խումբ 1, դաս 1, հոդված 4835 «Կառավարչական ծախսայություններ» պակասեցնել 100.0 հազ. դրամ հաստատելով 605.0 հազ. դրամ:
3) Վարչական բյուջեի Շրջակա միջավայրի պաշտպանություն Բաժին 05, խումբ 1, դաս 1, հոդված 4264 «Տրանսպորտային նյութեր» ավելացնել 160.0 հազ. դրամ հաստատելով 320.0 հազ.դրամ:
4) Վարչական բյուջեի Հարազատներին կորցրած անձինք Բաժին 10, խումբ 3, դաս 1, հոդված 4726 «Հուղարկավորության նպաստներ բյուջեից» ավելացնել 90.0 հազ. դրամ հաստատելով 450.0 հազ.դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ

6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 42

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2016Թ. ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել 2017թ. ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

| | |
|---|---|
| այդ թվում՝ գյուղապետարանի ապարատ | 121 785 236,32 դրամ |
| մշակույթի տուն | 3 833 760,33 դրամ |
| գրադարան | 722 848,53 դրամ |
| խորհրդատվական սենյակ | 83 700,00 դրամ |
| արարողությունների սրահ | 4 984 818,00 դրամ |
| Ընդամենը | 131 410 363,18 դրամ |

(մեկ հարյուր երեսունմեկ միլիոն չորս հարյուր տաս հազար երեք հարյուր վաթսուներեք դրամ տասնութ լումա)

| | |
|---|---|
| «Զովաբերի Մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 465 793,00 դրամ |
| Ընդամենը | 132876 156,18 դրամ |

2. Հաստատել դուրս գրման ակտերը.

այդ թվում՝

| | |
|---|---|
| գյուղապետարանի ապարատ | 24000,30 դրամ |
| մշակույթի տուն | 88062,10 դրամ |
| արարողությունների սրահ | 121250,00 դրամ |
| <<Զովաբերի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 2062,36 դրամ |

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ

6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 43

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ կետերով, 18-րդ հոդվածի 4-րդ կետով, 22-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Զովաբեր համայնքի ավագանու 23.01.2017թ. թիվ 1 նիստի թիվ 2-Ն որոշումը և հանձնաժողովի ուսումնասիրության ակտերը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Համայնքի բյուջեի «Սոցիալական պաշտպանություն» բաժին 10, խումբ 09, դաս 01, ծրագիր 51, հոդված 4729-ից 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ հատկացնել որպես սոցիալական օգնություն ներքոհիշյալ քաղաքացիներին.

1). Աիդա Արտավազդի Սահակյան – 20.0 հազ.դրամ
2). Գագիկ Սաղաթելի Սուքիասյան – 20.0 հազ.դրամ
3). Գևորգ Վաղինակի Առաքելյան – 40.0 հա.դրամ
4). Ժաննա Արամայիսի Թադևոսյան – 50.0 հազ.դրամ
5). Լիդա Մամիկոնի Սահակյան – 40.0 հազ.դրամ
6). Ծաղիկ Բագրատի Բաղդասարյան – 20.0 հազ.դրամ
7). Մարինե Զավենի Գալստյան – 20.0 հազ.դրամ
8). Ռուզաննա Ռազմիկի Թորոսյան – 40.0 հազ.դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ

6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

Համայնքի ղեկավար ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 44

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ, ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԳՐԱՖԻԿԻ ԿԱԶՄՈՒՄ

Ելնելով իրավիճակից, գոյացած հողի հարկի, գույքահարկի և հողի վարձավճարների գծով գոյացած ապառքների համար կազմվել է առաջիկա 5 տարվա մարման իրատեսական գրաֆիկ:

1. Հաստատել Զովաբեր համայնքի հողի հարկի և գույքահարկի, հողի վարձավճարների գծով 2018-2023թթ. ապառքների մարման գրաֆիկը համաձայն հավելված 1, 2-ի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ
2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

**Համայնքի ղեկավար՝** **ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 45-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 55-րդ հոդվածով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Զովաբեր համայնքի 2018թ. տարեկան բյուջեի նախագիծը (հազ. դրամներով).

   1) Եկամուտների գծով 36370.0

   2) Ծախսերի գծով 44247.4

   3) Դեֆիցիդ՝ ֆոնդային բյուջեի տարեվերջյան ազատ մնացորդ 7877.4

   4) Դեֆիցիդ՝ Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ուղղում ֆոնդային բյուջե 100.0 հազ.դրամ

Այդ թվում

Ա. Զովաբեր համայնքի 2018թ. վարչական բյուջեն

1). Եկամուտների գծով 36370.0

2). Ծախսերի գծով 36370.0

Բ. Զովաբեր համայնքի 2018թ. ֆոնդային բյուջեն

1). Եկամուտների գծով 7977.4

2). Ծախսերի գծով 7977.4

2. Հաստատել Չովաբեր համայնքի 2018թ. բյուջեի նախագծի եկամուտների և ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգումը (N 1, 2, 3, 6 հավելվածներ):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ

6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

**Համայնքի ղեկավար՝ ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ**

Հավելված N1
Ջովաբեր գյուղական համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 11-ի թիվ 38-Ն որոշման

ՋՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻՀԱՄԱՐՍԱՀՄԱՆՎԱԾՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻԵՎՎՃԱՐՆԵՐԻԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | Տուրքի տեսակները | Օրենքով սահմանված դրույքաչափերը | Ավագանու սահմանված դրույքաչափերը |
|---|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝<br>Հիմնական օբյեկտների համար՝ | | |
| ա) | մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և նշանակության օբյեկտների համար՝ | 0-15000դր | 5000դր |
| բ) | սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | | |
| բա) | 200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 30000դր. | 10000դր. |
| բբ) | 500-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 50000դր. | 15000դր |
| բգ) | 1000-իցմինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 50000դր | 25000դր |
| բդ) | 3000-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օյեկտների համար՝<br>ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝ | 100000դր | 35000դր |
| գ) | մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 3000դր | 800դր |
| դ) | 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 5000դր | 1 500դր |
| 2. | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | | |
| ա) | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն | 3000դր | 0 |
| բ) | բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների շենքի տրամաձափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասին 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփախության մասով, | | |
| գ) | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը: | | |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջողդեպքերի) թույլտվության համար՝ | 5000դր | 1500դր |
| 4. | Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200000դր | 150000դր |
| 5. | ՀՀ Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների | 100000դր. | |

| | | | |
|---|---|---|---|
| | կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնականկան կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար | | |
| 6. | Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար | 60000դր. | 25000դր |
| 7. | ՀՀ Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար | 20000դր. | |
| 8. | Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրերում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար | 50000դր. | |
| 9. | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ | | |
| Ա) | ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | | |
| - | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 0-10001դր | 1500դր |
| - | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10001-13001դր | 3500դր |
| - | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 13001-20001դր. | 4000դր |
| - | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 20001-25001դր. | 6500դր |
| - | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 25001-45001դր. | 8000դր |
| - | 501 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 45001-100001դր | 14000դր |
| Բ) | ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | | |
| - | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 0-10001դր | 1500դր |
| - | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10001-13001դր | 3500դր |
| - | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 13001-20001դր. | 4000դր |
| - | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 20001-25001դր. | 6500դր |
| - | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 25001-45001դր. | 8000դր |
| - | 500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 45001-100001դր | 14000դր |
| 10. | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում "Առևտրի և ծառայությունների մասին" ՀՀ օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ | 1քմ-ի համար 350 դր | 1քմ-ի համար 350 դր |
| 11. | Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին), ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | | |
| ա) | առևտրի օբյեկտների համար՝ | 5000-50000դր | 5000դր |
| բ) | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ | 25000-100000դր | 25000դր |
| գ) | բաղնիքների (սաունաների) համար՝ | 200000-500000դր | 250000դր |
| դ) | խաղատների կազմակերպման համար՝ | 500000- | 500000դր |

| | | | |
|---|---|---|---|
| | | 1000000դ | |
| ե) | շահումով խաղերի կազմակերպման համար՝ | 250000-500000դր | 250000դր |
| զ) | վիճակախաղերի կազմակերպման համար՝ | 100000-150000դր | 100000դր |
| 12 | Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է | | |
| ա) | հիմնական շինության ներսում՝ | | |
| - | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 0-5001դր | 2000 |
| - | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 5001-10001դր | 6000 |
| - | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 10001-15001դր. | 11000 |
| - | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 15001-20001դր. | 16000 |
| - | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 20001-30001դր. | 21000 |
| - | 500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 30001-50001դր. | 25000 |
| բ) | ոչհիմնական շինության ներսում՝ | | |
| - | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 0-1001դր | 500 |
| - | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 1001-2001դր | 1500 |
| - | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 2001-4001դր. | 3000 |
| - | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 4001-8001դր. | 5000 |
| - | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 8001-15001դր. | 9000 |
| - | 500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 15001-25001դր. | 16000 |
| 14. | Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ ամայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղազրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քմ-ի համար՝ | | |
| ա) | ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 2000դր. | 2000դր. |
| բ) | թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 3500դր. | 3000դր |
| գ) | սոցիալական գովազդի համար՝ | 0դր. | |
| դ) | այլ արտաքին գովազդի համար՝ | 1500դր | 1500դր |
| ե) | դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | սահմանված տուրքի 25%-ի չափով | |
| զ) | եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու ույլտվության համար | սահմանված տուրքի 10%-ի չափով | |
| 15. | Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները (զինանշան,անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 100000դր | |
| 16. | համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ | 10000դր | |

| | | | |
|---|---|---|---|
| 17. | համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 500000դր | |
| 18. | համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | | |
| - | 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 2000000դր | |
| - | 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 5000000դր | |
| - | 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 7000000դր | |
| - | 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 100000000դր | |
| 2) | Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը գյուղական բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ կարող են հաշվարկվել 0.3, 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ, քաղաքային բնակավայրերում՝ 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի: | | |
| 3) | Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային համայնքներում կարող են հաշվարկվել 0.3 գործակցի կիրառմամբ: | | |
| 4) | Սույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափը Երևան քաղաքում՝ ավագանու որոշմամբ, ըստ գոտիավորման, կարող է սահմանվել մինչև 5.0 անգամ, իսկ <<բ>> ենթակետով սահմանված դրույքաչափը՝ մինչև մինչև 10.0 անգամ ավելի: | | |
| | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ | | |
| 19. | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ, կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | 0-10000դր | 1000դր |
| 20. | ա) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | | 20000դր. |
| 21. | Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական էւ այլ նման աշխատանքների համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | | 1000դր |
| 22. | Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ յուրաքանչյուր մասնակցից վճար՝ | | 5000դր. |
| 23. | Ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար տրամադրվող հողատարածքի առավելագույն չափ սահմանել 12 քառ. մետր, որը տրամադրվում է անվճար հիմունքով, որից ավելի լինելու դեպքում տարածքը տրամադրվում է վճարովի հիմունքով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով՝ 1 քառ, մետր | | 5000դր. |
| 24. | Ջովաբեր համայնքի արարողությունների սրահի մինչև 24 ժամ օգտագործելու համար վճար՝ | | |
| ա) | հոկտեմբերի 1-ից մինչև ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածի համար՝ | | 20000դր |
| բ) | ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածի համար՝ | | 15000դր |
| 25. | Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է "Աղբահանության և սանիտարական մաքրման մասին "ՀՀ օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում | | |
| - | ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ առավելագույնը ամսական | 100-400 դրամ | 100 |

ՋՈՎԱՐԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԵՍԱՅԱՆ

Հավելված N1
ՀՀ Գեղարքունիքի մարզի
Զովաբեր գյուղական համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 11-ի թիվ 40 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 160000 |
| | ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | |
| 2 | Աշխատակազմի քարտուղար (ծածկ 1.2-1) | 1 | 170000 |
| 3 | Առաջատար մասնագետ (ծածկ 3.1-1) | 1 | 160000 |
| 4 | Առաջատար մասնագետ (ծածկ 3.1-2) | 1 | 160000 |
| 5 | Երկրորդ կարգի մասնագետ (ծածկ. 3.3-1) | 1 | 80000 |
| 6 | Երկրորդ կարգի մասնագետ (ծածկ. 3.3-2) | 1 | 80000 |
| | ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 7 | Համակարգչային օպերատոր | 1 | 80000 |
| 8 | Տեխ. աշխատող | 1 | 78700 |
| 9 | Բակապահ | 1 | 73490 |
| 10 | Բակապահ | 1 | 73490 |

ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Գեղարքունիքի մարզի
Ջովաբեր գյուղական համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 11-ի թիվ 40 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՋՈՎԱԲԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 6
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 86500 |
| 2 | Հաշվապահ | 1 | 78690 |
| 3 | Դաստիարակ | 1 | 85500 |
| 4 | Երաժշտական դաստիարակ | 0.30 | 81000 |
| 5 | Խոհարար | 1 | 73490 |
| 6 | Բակապահ | 1 | 73490 |

ՋՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ

*Հավելված N1*
*ՀՀ Գեղարքունիքի մարզի*
*Ջովաբեր գյուղական համայնքի ավագանու*
*2017թ. դեկտեմբերի 11-ի թիվ 44 որոշման*

Ջովաբեր համայնքի հողի հարկի և գույքահարկի ապառքների մարման

# Գ Ր Ա Ֆ Ի Կ

Սահմանել Ջովաբեր համայնքի հողի հարկի և գույքահարկի ապառքների մարման հետևյալ գրաֆիկը առաջիկա հինգ տարվա ընթացքում.

| | Հողի հարկ հազ.դրամ | Գույքահարկ հազ.դրամ |
|---|---|---|
| 2018 | 1000.0 | 80.0 |
| 2019 | 700.0 | 80.0 |
| 2020 | 750.0 | 80.0 |
| 2021 | 750.0 | 80.0 |
| 2022 | 850.8 | 103.5 |

Հավելված N2
ՀՀ Գեղարքունիքի մարզի
Ջովաբեր գյուղական համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 11-ի թիվ 44 որոշման

Ջովաբեր համայնքի հողի վարձակալության ապառքների մարման

# Գ Ր Ա Ֆ Ի Կ

Սահմանել Ջովաբեր համայնքի համայնքային սեփականություն համարվող հողի վարձակալության ապառքների մարման հետևյալ գրաֆիկը առաջիկա հինգ տարվա ընթացքում.

| | Հողի վարձավճարներ հազ.դրամ |
|---|---|
| 2018 | 180.0 |
| 2019 | 95.0 |
| 2020 | 105.0 |
| 2021 | 100.0 |
| 2022 | 100.0 |